

<p><b>ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Պ-548</b> <b>ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ</b></p>	<p><b>AGREEMENT ON MINING N P-548</b> <b>FOR EXTRACTION OF MINERALS</b></p>
<p>քաղ. Երևան «<u>13</u>» <u>12</u> 2016թ.</p>	<p>Yerevan city “<u>13</u>” <u>12</u> 2016</p>
<p>Հայաստանի Հանրապետության Էներգետիկ Ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը՝ ի դեմս նախարար ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, որը գործում է Հայաստանի Հանրապետության անունից, իր լիազորությունների սահմաններում (այսուհետ՝ լիազոր մարմին) մի կողմից, «ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՌ» ՍՊԸ տնտեսավարող սուբյեկտը (այսուհետ՝ ընդերքօգտագործող), ի դեմս տնօրեն ԱՄԻՆ ՋԱԶԱԵՐԻ, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, դեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրը) և այլ իրավական ակտերով, համապատասխանաբար նախարարության և տնտեսավարող սուբյեկտի կանոնադրություններով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթղթերը, տրամադրվող հանքավայրի հանքային ջրի աղբյուրի կամ հորատանցքի շահագործման նախագիծը, կնքեցին սույն ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):</p>	<p>The RA Ministry of Energy Infrastructures and Natural Resources, represented by the Minister ASHOT MANUKYAN, acting on behalf of the Republic of Armenia, within the scope of its authorities (hereinafter referred to as “the Authorized Body”), on the one party, And an economic entity “A&amp;M RARE” LLC (hereinafter referred to as “the Mining Operator”), represented by the Director AMIN JAZAERI, acting on the basis of the Company charter, on the other party,</p> <p>Being governed by the RA Civil Code, the RA Mining Code (hereinafter referred to as “the Code”) and other legal acts, by the charters of the Ministry and the economic entity correspondingly, and based on relevant documents prescribed by the RA Legislation, the project of operation of mineral water source or well at the deposit provided, entered into this Agreement on Mining (hereinafter referred to as “the Agreement”).</p>
<p><b>1. Ընդհանուր դրույթներ</b></p>	<p><b>1. General Provisions</b></p>
<p>1.1 Պայմանագիրը նախատեսում է հանքավայրի հանքային ջրի աղբյուրը կամ հորատանցքը շահագործման տրամադրելու պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, վճարների (բնօգտագործման, բնապահպանական, բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագիսի համարման, մշտադիտարկումների իրականացման) վճարման վերաբերյալ դրույթներ, բնապահպանական կառավարման պլանը, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման (զգուշացման, հրաժարման, փոփոխության), համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ, հանքի փակման հետ կապված դրույթները, ինչպես</p>	<p>1.1 The Agreement covers the conditions of providing the mineral water source or well of the deposit for operation, the rights and obligations of the parties, provisions on fee payments (for natural utilization, environment, nature and environment protection capital replenishment, monitoring implementation), the environmental management plan, provisions on termination of mining right (warning, refusal, change), extent and terms of performance of obligations undertaken in the sphere of social and economic development of the community, provisions connected with mine closure, as well as other conditions governing their relations.</p>

Նաև նրանց փոխհարաբերությունները կարգավորող այլ պայմաններ:	
1.2 Պայմանագիրը բաղկացած է հիմնական տեքստից և NN 1, 2, 3, 4 հավելվածներից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը:	1.2 The Agreement is composed of the main text and Annexes NN 1, 2, 3, 4 constituting the inseparable part thereof.
1.3 Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները, այդ թվում՝ կողմերի այլ իրավունքները կարգավորվում են օրենսգրքով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:	1.3 Any relations not regulated by the Agreement, inter alia other rights of the Parties, shall be governed by the Code, as well as other legal acts regulating the field.
<b>2. Պայմանագրի առարկան</b>	<b>2. Subject of the Agreement</b>
<p>2.1 Պայմանագրով՝ լիազոր մարմինն ընդերթօգտագործողին 0,77 լ/վրկ (24,2 հազ. մ<sup>3</sup>/տարի), ածխաթթվային հանքային ջուր (օգտակար հանածոյի քանակը, մ<sup>3</sup>, գ/տ) արդյունաբերական (շատացում) նպատակով 50 տարի ժամկետով ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում, իսկ ընդերթօգտագործողն ընդունում է ՀՀ Կոտայքի մարզի Արտավազ համայնքի վարչական տարածքի Ուլաշիկ գետի ավազանի N5 ածխաթթվային հանքային ջրի աղբյուրի (հանքավայրի անվանումը, տեղամասի անվանումը կամ հանքային ջրերի աղբյուրի անվանումը կամ հորատանցքի համարը) հաշվեկշռային պաշարներն օգտագործման ամբողջ ժամկետի համար՝ 1210 հազ.մ<sup>3</sup> ըստ «B» և «C» կարգերի հանքային ջուր (հիմնական և ուղեկից օգտակար հանածոների քանակները՝ ըստ կարգերի), ածխաթթվային հանքային ջուր (հիմնական և ուղեկից բաղադրիչների պարունակությունը %, գ/տ և այլն) (օգտակար հանածոյի հիմնական ցուցանիշները):</p> <p>Պայմանագրի N 1 հավելվածով նշվում են ընդերթօգտագործողի ֆինանսական առաջարկները և նրա կողմից վճարվող ընդերթօգտագործման վճարները, պայմանագրի N 2 հավելվածով՝ հանքի փակման ծրագրով սախատեսված պարտավորությունները, պայմանագրի N 3 հավելվածով՝ համայնքի սոցիալ-նուտեսական զարգացման ոլորտում ստանձնած կարտավորությունները, իսկ պայմանագրի N 4 ավելվածով՝ բնապահպանական կառավարման</p>	<p>2.1 Under the Agreement the Authorized Body shall deliver to the Mining Operator's temporary possession and use for 50 years term 0,77 l/sec. (24,2 thousand cubic meter/year) carbonaceous mineral water (volume of mineral, cubic meter, g/t) with industrial (bottling) purpose, and the Mining Operator shall accept the balance reserves of N 5 carbonaceous mineral water source of Ulashik river basin within the administrative borders of Artavaz Community of Kotayk region of the RA (name of the deposit, name of the subsoil allotment or name of the mineral water source or well number) for the whole use term, i.e. 1210 thousand cubic meter mineral water of "B" and "C" classes (volumes of basic minerals and varietals per classes), carbonaceous mineral water (content of basic minerals and varietals, %, g/t, etc.), _____ (main indicators of the mineral).</p> <p>The Annex N 1 of the Agreement covers the financial proposals by the Mining Operator and the mining fees payable by itself, the Annex N 2 of the Agreement covers the obligations established by mine closure plan, the Annex N 3 of the Agreement covers the obligations undertaken in the sphere of social and economic development of the community, and the Annex N 4 of the Agreement covers the environmental management plan.</p>

Ալանը:	
Պայմանագիրն ըստ անհրաժեշտության կարող է ունենալ նաև այլ հավելվածներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման և հումքի վերամշակման աշխատանքների ժամկետները, ըստ փուլերի, իսկ գուգահեռաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու դեպքում դրանց կատարման ժամանակացույցի:	Upon necessity the Agreement may have also other annexes on deadlines for works of mineral extraction and raw material processing, as per phases, and, in case of parallelly performing geological exploration works, annex on schedule of their performance.
2.2 Լիազոր մարմինը երաշխավորում է, որ պայմանագրի 2.1-ին կետում նշված հանքավայրը կամ հանքավայրի տեղամասը գրավ դրված, վարձակալության, անհատույց օգտագործման տրված չէ, կառուցապատված կամ կառուցապատման իրավունքը ծանրաբեռնված չէ, ինչպես նաև արգելանքի տակ չի գտնվում:	2.2 The Authorized Body guarantees that the deposit or the subsoil allotment specified in the clause 2.1 of the Agreement is not pledged, leased, delivered to with-no-indemnity use, does not have any construction thereon or burdened with construction right, nor is under lien.
2.3 Պայմանագրի գործողության ընթացքում հանքավայրի օգտագործման արդյունքում ընդերքօգտագործողի ստացած շահույթը նրա սեփականությունն է:	2.3 During the effective term of the Agreement the profit received by the Mining Operator as a result of operation of the deposit shall be its ownership.
<b>3. Կողմերի իրավունքները և պարտականությունները</b>	<b>3. Rights and obligations of the Parties</b>
<b>3.1 Լիազոր մարմինը իրավունք ունի՝</b>	<b>3.1 The Authorized Body shall be entitled:</b>
3.1.1 ընդերքօգտագործողից պահանջելու հանքավայրը շահագործել ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում ընդունված ստանդարտներին, նորմերին ու կանոններին համապատասխան,	3.1.1 to demand from the Mining Operator to operate the deposit in compliance with the standards, norms and rules accepted in the field of mining and subsoil protection;
3.1.2 գրավոր զգուշացնելու և վաղաժամկետ լուծելու պայմանագիրն օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն,	3.1.2 to give a written warning and to early terminate the Agreement in accordance with the article 30 of the Code;
3.1.3 սոուգելու ընդերքօգտագործման ընթացքում մոնիթորինգի վարման լիարժեքությունը, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների կատարումը,	3.1.3 to check out the accuracy of monitoring during mining and that the requirements established for implementation of stock-taking of movements/flow/ of minerals and submission of information are met;
3.1.4 սոուգելու ընդերքօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստական ծավալների չափաբանակների, վճարների հաշվարկման և հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման	3.1.4 to check out that the requirements of the procedure for estimation of actual quantities treated as objects of fee for use of minerals and fee calculation and calculation reports are met;

կարգի պահանջների կատարումը,	
3.1.5 ստուգելու ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված պարտավորությունների և նախագծի պահանջների կատարում՝ բացառությամբ բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունների,	3.1.5 to check out performance of the liabilities under the Agreement on Mining and the requirements of the project with the exception of authorities of the authorized body of state management of environment in the field of nature and environment protection;
3.1.6 պահանջելու ընդերքօգտագործողից օգտակար հանածոնների պաշարների լիակատար կորզում և հիմնական ու համատեղ գտնվող օգտակար հանածոնների և դրանց ուղեկցող բաղադրամասերի ողջամիտ և համային օգտագործումը կամ դրանց պահեստավորումն ու պահպանումը,	3.1.6 to demand from the Mining Operator to perform a full extraction of minerals, to have reasonable and complex use of basic and adjacently available minerals and their varietals and their storage and preservation;
3.1.7 պահանջելու ընդերքօգտագործողից ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրացրուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում նրանց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում հանձնել լիազոր մարմնին,	3.1.7 to demand from the Mining Operator, upon expiration of the term of mining right or in case of refusal therefrom, to deliver within 3 months the geological information under its disposal to the Authorized Body;
3.1.8. իրականացնելու ընդերքի տրամադրված տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններ (մոնիթորինգի վարում) այդ մասին առնվազն 14 օր առաջ գրավոր իրազեկելով ընդերքօգտագործման իրավունք կրողին,	3.1.8 to perform geological explorations in the provided subsoil allotment (conduct of monitoring), upon 14 days prior written notification to the mining right holder;
3.1.9 ստուգվող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գրդելու ստուգվող սուբյեկտի գրասենյակային, արտադրական, պահեստային, լաբորատոր և այլ տարածքներ ու ստորաբաժանումներ,	3.1.9 to have free access to office, facilities, warehouse, laboratory and other territories and sub-units of the audited entity accompanied by representative of the entity;
3.1.10 ստուգման ընթացքում ստուգվող սուբյեկտից պահանջելու փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, ինչպես նաև վերցնելու փորձանմուշներ, կատարելու կապարակներում և չափագրումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին,	3.1.10 to request from the audited entity documents, data, explanations, references, as well as to take test samples, put seals and make measurements during audits which shall be directly related with objectives of audit;

3.1.11 ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողություն իրականացնելու տեսչական ստուգումների, ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի դրույթներին համապատասխան:	3.1.11 to have state control over mining and subsoil protection through inspections, audits and examinations in the manner established by the RA Law “On Organizing and Conducting Inspections in the Republic of Armenia” and in accordance with the provisions of the RA Code on Mining.
<b>3.2 Լիազոր մարմինը պարտավոր է՝</b>	<b>3.2 The Authorized Body shall be obliged:</b>
3.2.1 ընդերքօգտագործողին սահմանված կարգով տրամադրել հանքավայրին վերաբերվող փաստաթղթերը,	3.2.1 to provide in the established manner the documents relating to the deposit to the Mining Operator;
3.2.2 գրավոր իրազեկել ընդերքօգտագործողին առնվազն 14 օր առաջ ընդերքի տրամադրված տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ կետով տրված համաձայնության մասին:	3.2.2 to make a written notification to the Mining Operator, at least 14 days prior, on consent to performing works of geological explorations in the provided subsoil allotment.
<b>3.3 Ընդերքօգտագործողն իրավունք ունի՝</b>	<b>3.3 The Mining Operator shall be entitled:</b>
3.3.1 բացահիկ իրավունքով կատարելու երկրաբանական ուսումնասիրություն սանիտարական գոտու սահմաններում, իսկ հատկացված ընդերքի տեղամասում (հորատանցքում)՝ օգտակար հանածոյի արդյունահանում,	3.3.1 with an exceptional right to perform geological exploration with the boundaries of the sanitary zone and extraction of minerals in the provided subsoil allotment (in the well);
3.3.2 մտնելու ընդերքի տեղամաս և իրականացնելու նախագծով նախատեսված բոլոր աշխատանքներն օգտակար հանածոյի արդյունահանման և ուսումնասիրության նպատակով,	3.3.2 to enter into the subsoil allotment and implement all the works under the project with the purpose of extraction of minerals and exploration;
3.3.3 օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով կառուցելու անհրաժեշտ շենքեր, շինություններ, հաղորդակցության ուղիներ, տեղադրելու սարքավորումներ, փոխադրելու և հարստացնելու արդյունահանված օգտակար հանածոն,	3.3.3 with the purpose of mineral extraction to construct buildings, constructions, communication lines, to install equipment, to ship and concentrate the extracted mineral;
3.3.4 տնօրինելու արդյունահանված օգտակար հանածոն,	3.3.4 to dispose the extracted mineral;
3.3.5 իրեն տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի շրջանակում երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով քաղաքացիա-	3.3.5 with the purpose of implementing geological exploration within the framework of right to extract minerals provided to itself to engage third parties by entering into civil contracts;

հրավական պայմանագրերի կնքմամբ ներգրավելու երրորդ անձանց,	
3.3.6 դիմելու լիազոր մարմին օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի պայմանները փոփոխելու նպատակով, եթե հայտնվել են էապես նոր՝ նախկինում չնախատեսված հանգամանքներ,	3.3.6 to apply to the Authorized Body with the purpose of amending provisions of the mineral extraction agreement, in case new circumstances have arisen not intended previously;
3.3.7 վաղաժամկետ հրաժարվելու օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի՝ կատարելով պայմանագրով և օրենսդրով նախատեսված պարտավորությունները:	3.3.7 to early refuse from the right to extract minerals upon performing obligations envisaged by the Agreement and the Code.
<b>3.4 Ընդերքօգտագործողը պարտավոր է՝</b>	<b>3.4 The Mining Operator shall be obliged to:</b>
3.4.1 իրականացնել աշխատանքներն օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին համապատասխան,	3.4.1 to perform the works in compliance with the provisions of the mineral extraction agreement and the project;
3.4.2 կատարել լիազոր մարմնի և այլ իրավասու պետական մարմինների՝ օրենսդրության պահանջների պահպանման նպատակով տրված ցուցումները,	3.4.2. to perform instructions of the Authorized Body and the other entitled state bodies given with the purpose of maintaining the legislation requirements;
3.4.3 պահպանել օգտակար հանածոյի արդյունահանման, տեղափոխման և վերամշակման ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունված ստանդարտների, նորմերի ու կանոնների պահանջները,	3.4.3 to meet the requirements of standards, norms and rules adopted in the Republic of Armenia during extraction, shipment and processing of the mineral;
3.4.4 ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը,	3.4.4 to ensure maintenance of the requirements of the project on mineral extraction;
3.4.5 վարել երկրաբանական, մարկշեյտերական և այլ փաստագրություն, պահպանել դրանք ընդերքօգտագործման բոլոր ձևերի աշխատանքների ընթացքում;	3.4.5 to maintain geological, survey and other documentation and to keep them during all kinds of works of mining;
3.4.6 վարել օգտակար հանածոների պաշարների ամենօրյա շարժի գրանցամատյանը,	3.4.6 to maintain the registry book of daily movements/flow/ of mineral reserves;
3.4.7 ներկայացնել լիազոր մարմին օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունները,	3.4.7 to submit to the Authorized Body quarter and annual reports on movements/flow/ of mineral reserves;
3.4.8 հանձնել լիազոր մարմնին անհրաժեշտ երկրաբանական տեղեկությունը,	3.4.8 to deliver to the Authorized Body the necessary geological information;
3.4.9 հավաքել, պահպանել և լիազոր մարմնին տրամադրել ուսումնասիրված, արդյունահանված	3.4.9 to collect, maintain and provide to the Authorized Body data on mineral reserves explored,

և ընդերքում կորսված օգտակար հանածոների պաշարների, դրանց պարունակած բաղադրամասերի, որակի ու քանակի մասին տվյալներ,	extracted and lost in the subsoil, on their components, quality and quantity;
3.4.10 ապահովել ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների կատարման անվտանգությունը, հորատանցքի պահպանումն ու վերանորոգումը,	3.4.10 to ensure the safety of performance of mining works, maintenance of the well and its renovation;
3.4.11 ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի ու բնության և շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինուազների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից,	3.4.11 to ensure keeping the subsoil, atmosphere, soil, forests, waters and nature and other environment objects, as well as buildings and other constructions harmless of any adverse effect connected with the mining works;
3.4.12 ապահովել բնության, պատմական և մշակույթի հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից,	3.4.12 to ensure keeping the nature, historic and cultural monuments harmless of any adverse effect connected with the mining works;
3.4.13 ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությամբ նախատեսված պայմանները,	3.4.13 to ensure the provision of requirements established by expertise conclusion on environmental impact;
3.4.14 կատարել իր միջոցների հաշվին ջրերի քանակի, որակի, մակարդակների սիստեմատիկ ոեժմային դիտարկումներ ջրհան և ոեժմային /դիտողական/ հորատանցքերում՝ յուրաքանչյուր հորատանքի համար պաշարների գործակալության կողմից հաստատված ջրաերկրաբանական հաշվարկային պարամետրերի խստիվ պահպանմամբ,	3.4.14 at its own cost and expense to perform systematic regular observations of water quantity, quality and levels at pumping and observatory wells, by strictly complying with the hydrogeological calculation parameters established by the agency for reserves of each well;
3.4.15 ապահովել հանքի փակման ծրագրի, այդ թվում՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը,	3.4.15 to ensure implementation of the mine closure plan, inter alia of measures of social provision for the labor after the mine closure;
3.4.16 ապահովել փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը,	3.4.16 to ensure implementation of intended social and economic provision measures for the communities located in the zone of immediate effect of the mine closure;
3.4.17 ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ շահագործվող հանքավայրում (տեղամասում) կոնդիցիաները և պաշարները ենթարկել վերագնահատման և ներկայացնել լիազոր մարմնի վերահստատմանը,	3.4.17 no later than once in five years to reevaluate the conditions and reserves at the operated deposit (subsoil allotment) and to submit it for reapproval of the Authorized Body;

3.4.18 ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալոց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում իր տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում սահմանված կարգով հանձնել լիազոր մարմնին,	3.4.18 upon expiration of the term of mining right or in case of refusal therefrom, to deliver within 3 months the geological information under its disposal to the Authorized Body;
3.4.19 Տեղեկացնել ընդերքօգտագործման իրավունքի իրավահաջորդության մասին լիազոր մարմնին վերակազմակերպման գրանցման պահից 14 օրվա ընթացքում,	3.4.19 to inform the Authorized Body on legal succession of mining right within 14 days since the time of registration of reorganization;
3.4.20 թույլատրել լիազոր մարմնին ստուգման նպատակով անարգել մուտք գործելու գրասենյակային, արտադրական, պահեստային, լաբորատոր և այլ տարածքներ ու ստորաբաժանումներ,	3.4.20 to allow the Authorized Body to have free access to office, facilities, warehouse, laboratory and other territories and sub-units with the purpose of audit;
3.4.21 տրամադրել լիազոր մարմնին ստուգման ընթացքում պահանջվող փաստաթյաեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, ինչպես նաև թույլատրել վերցնելու փորձանմուշներ, կատարել կապարակներում և չափագրումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին,	3.4.21 to provide to the Authorized Body any documents, data, explanations, references, as well as to allow to take test samples, put seals and make measurements during audits which shall be directly related with objectives of audit;
3.4.22 կատարել Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված բոլոր պարտականությունները:	3.4.22 to perform all its obligations prescribed by the laws of the Republic of Armenia.
<b>4. Զգուշացում</b>	<b>4. Warning</b>
4.1 Լիազոր մարմինը, օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն, կարող է ընդերքօգտագործողին տալ զգուշացում, եթե նա՝	4.1 The Authorized Body may, in accordance with the article 30 of the Code, give a warning to the Mining Operator, in the event the latter:
4.1.1 չի կատարում օրենսգրքով նախատեսված պարտավորությունները,	4.1.1 does not fulfill its obligations under the Code;
4.1.2 չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ պայմանագրով, նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված,	4.1.2 does not perform the provisions of the mining right, inter alia those prescribed by the mining right under the Agreement and the project;
4.1.3 իր պարտավորությունների իրականացման առնչվող պայմանները՝ բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքեր, չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում,	4.1.3 does not perform the provisions related to its obligations, except for the cases envisaged by the Code, does not pay the lawfully prescribed fees, within one month after the date of determination;
4.2 Լիազոր մարմինն իրավունք չունի որոշում	4.2 The Authorized Body shall not be entitled to

ընդունելու ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե իրավունք կրողը զգուշացման մասին ժանուարումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում վերացրել է նշված հիմքերը:

make a decision on termination of mining right, in case the right holder has removed all the stated grounds within no more than 90 days upon receipt of notice on warning.

## 5. Հաշվետվություններ և տեղեկություն

## 5. Reporting and information

5.1 Ընդերքօգտագործման իրավունք կրողը լիազոր մարմին օրենսգրքով, այլ օրենքներով սահմանված կարգերով պարտավոր է ներկայացնել հետևյալ հաշվետվությունները և տեղեկությունները՝

5.1 In the manner prescribed by the Code and other legal acts the mining right holder shall submit to the Authorized Body the following reports and information:

5.1.1 ընդերքօգտագործման բնագավառում բնօգտագործման վճարների հաշվարկ հաշվետվություն,

5.1.1 calculation-report of fees for use of natural resources in the field of mining.

5.2 Հաշվետվությունների ձևերի փոփոխման դեպքու լիազոր մարմինը պարտավոր է այդ մասին տեղեկացնել ընդերքօգտագործողին՝ փոփոխությունների կատարման պահից մեկամսյա ժամկետում:

5.2 In case of change of reporting forms the Authorized Body shall be obliged to inform to the Mining Operator within one month term since the time of making such changes.

5.3 Ընդերքօգտագործողը սահմանված վճարների վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում, կարգով և ձևով:

5.3 The Mining Operator shall submit the information about the determined fees to the Authorized Body within the terms, manner and way prescribed by the RA Legislation.

## 6. Պայմանագրի ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և լուծումը

## 6. Entry of Agreement into force, effective term and dissolution

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է թույլտվության գործողության ամբողջ ժամանակահատվածում, եթե պայմանագրով սահմանված հիմքերով պայմանագիրը վաղաժամկետ չի լուծվել:

6.1 The Agreement shall enter into force since the time of being signed and shall be effective for the whole term of the permit effectiveness, unless the Agreement is early terminated on the grounds prescribed thereby.

6.2 Պայմանագիրը գործում է նաև ժամկետի կամ թույլտվությամբ տրամադրված ընդերքի տեղամասի սահմանված կարգով փոփոխության դեպքում: Եթե երկարաձգվել է թույլտվության պայմանների փոփոխությամբ, ապա պայմանագիրը շարունակում է գործել՝ հաշվի առնելով այդ փոփոխությունները.

6.2 The Agreement shall also be effective in case of change in the established manner of the term and the subsoil allotment provided by the permit. In case of being extended because of changes in the provision of the permit, then the Agreement shall continue to be effective taking into consideration such changes.

6.3 Պայմանագիրը կարող է լուծվել՝

6.3 The Agreement can be dissolved:

6.3.1 լիազոր մարմին նախաձեռնությամբ՝ ընդերքօգտագործողի կողմից պայմանագրի

6.3.1 upon the initiative of the Authorized Body in case of breaches of the Agreement provisions by the

դրույթների խախտման դեպքում,	Mining Operator;
6.3.2 ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ՝ ընդերքօգտագործողի կողմից ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ հանդիսացող ընդերքի ամբողջ տեղամասից հրաժարվելու դեպքում դիմում ներկայացնելու և լիազոր մարմնի կողմից հրաժարման հավաստագիր տրամադրելու դեպքում,	6.3.2 upon the initiative of the Mining Operator in case the Mining Operator submits an application on refusal from the whole subsoil allotment, being an object of mining right, and the Authorized Body gives a certificate on such refusal;
6.3.3 թույլտվության ժամկետի ավարտի դեպքում:	6.3.3 upon expiration of effective term of the permit.
6.4 Լիազոր մարմնի կողմից թույլտվությունն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցվելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:	6.4 Upon early termination of the permit by the Authorized Body in cases and manner prescribed by the Code, the Agreement shall be considered dissolved.
<b>7. Պայմանագրում փոփոխություն կատարելու հիմքերը</b>	<b>7. Grounds for making amendments to the Agreement</b>
Հրահետախուզման և (կամ) շահագործական հետախուզման արդյունքում հանքավայրում պաշարների էական փոփոխության, հանքավայրի լեռնաերկրաբանական, տեխնիկատնտեսական պայմանների զգայի փոփոխման դեպքում ընդերքօգտագործողի առաջարկությամբ լիազոր մարմինը կարող է ընդերքօգտագործման իրավունքը ձևավորող փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ: Հանքավայրի շահագործման փոփոխված պայմանները ներկայացվում են առանձին (հավելվածը կահմանվի):	In case as a result of additional exploration and (or) operational investigation the reserves at the deposit and geological and technical conditions of the deposit turn out to have significantly changed, upon the Mining Operator's proposal the Authorized Body may make respective amendments to the documents certifying mining right. Changes to the deposit operation conditions shall be represented separately (Annex to be determined).
<b>8.Անհաղթահարելի ուժի, ինչպես նաև կողմերի գործունեության հետ չկապված դեպքեր</b>	<b>8. Force-majeure events, as well as events not related to the activities of the parties</b>
Պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելոց հետո, և որը կողմերը չեն կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթունների, պատերազմի, ահարեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության,	In case of full or partial non-performance of the obligations under the Agreement, the Parties shall be released of any liability, in case it has occurred as a result of force-majeure event which has arisen after execution of this Agreement and which the parties could not have predicted or prevented. Among such events are fire, flood, earthquake, storm or other Acts of God, as well as explosions, war, terrorism, civil war, disorder, insurrection, nationalization and other cases which make impossible performance of the obligations under this Agreement.

ազգայնացման և այլ դեպքեր, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:	
<b>9. Վեճերի լուծումը</b>	<b>9. Dispute settlement</b>
Պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:	Any disputes arising between the parties during performance of the Agreement shall be settled via negotiations. In case no agreement is achieved thereby, disputes shall be solved in judicial manner.
<b>10. Ծանուցում</b>	<b>10. Notification</b>
Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծանուցումները, հաղորդումների կատարումը համարվում է պատշաճ, եթե կատարված է գրավոր և տրված է առձեռն, կամ ուղարկված է պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ կատարված է փոխանցում ֆաքսի միջոցով կողմի ստորև նշված հասցեով կամ այդ նպատակով կողմի նշած մեկ այլ հասցեով, ընդ որում յուրաքանչյուր դեպքում պետք է առկա լինի գրավոր ստացական, որը կարող է փոխանցվել էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով:	During the effective term of the Agreement the notices and communication between the Parties shall be considered properly done, if done in written form and given manually or sent by registered mail or by e-mail or transmitted by facsimile to the party's address mentioned below or to other address specified by the party for such purpose, moreover, in any case there shall be available a written receipt which can be transmitted by e-mail or by facsimile.
<b>11. Այլ դրույթներ</b>	<b>11. Other provisions</b>
11.1 Սույն պայմանագրի հավելվածները կազմում են նրա անբաժանելի մասը:	11.1 The Annexes to the Agreement shall be the inseparable part thereof.
11.2 Սույն պայմանագիրը կազմված է 3 օրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում գերակայությունը տրվելու է հայերեն տարբերակին:	11.2 This Agreement is executed in 3 counterparts, in Armenian and English, having equally valid legal force. In case of discrepancy between the two versions, the Armenian version shall prevail
11.3 Պայմանագրին կցվում են հավելվածներ <u>6</u> էջից, այդ թվում՝ հավելված N 1 ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները <u>2</u> էջից, հավելված N 2 հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ <u>2</u> էջից, հավելված N 3 համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման <u>1</u> ոլորտում ստանձնած պարտավորություններ <u>1</u> էջից, հավելված N 4 բնապահպանական կառավարման պլան <u>1</u> էջից:	11.3 Enclosed to the Agreement are Annexes in <u>6</u> pages, among them – Annex N 1 on financial proposals and mining fees in <u>2</u> page, Annex N 2 on obligations established by mine closure plan in <u>2</u> page, Annex N 3 on obligations undertaken in the sphere of social and economic development of the community in <u>1</u> page and Annex N 4 on environmental management plan in <u>1</u> page.

<p><b>12. Կողմերի գտնվելու վայրը, բանկային վավերապայմանները և ստորագրությունները</b></p>	<p><b>12. Location place, bank details and signatures of the Parties</b></p>
<p>Հիազոր մարմին <b>ՀՀ Էներգետիկ և նախակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</b> <b>ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 3</b> (փոստային դասիչը, գտնվելու վայրը) հեռ. (011) 521-964, ֆաք. (37411) 526-365; ֆին. Նախ. Գործառն. Վարչ. հ/հ 900011009082 (հեռախոսահամարները, հեռագրային դասիչները, հաշվարկային հաշիվը) Ընդերքօգտագործող «Էլ ընդ էմ Ռեյլ» ՍՊԸ, ք. Երևան, Ամիրյան փ. 4/7, 7-րդ հարկ (փոստային դասիչը, գտնվելու վայրը), հեռ. 011 97 79 70, 011 97 79 72, ՀՎՀ 01846699 (հեռախոսահամարները, հեռագրային դասիչները, հաշվարկային հաշիվ, հարկային կոդը)</p>	<p>The Authorized Body – <u>The RA Ministry of Energy and Natural Resources</u> <u>Government Building 3, the Republic Square, Yerevan 0010, RA</u> (postal code, location address) Tel.: (011) 521-964, Facsimile: (37411) 526-365, Operational Dep. At the Min. Of Fin., Acc/N 900011009082 (telephone numbers, telegraphic codes, settlement account) Mining Operator – “A&amp;M Rare” LLC <u>#4/7 Amiryan street, 7th floor, Yerevan city</u> (postal code, location address) Tel.: 011 97 79 70, 011 97 79 72, TPIN 01846699 (telephone numbers, telegraphic codes, settlement account, tax code)</p>

**ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝  
THE RA MINISTER OF ENERGY INFRASTRUCTURES  
AND NATURAL RESOURCES:**

**ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

(անուն, ազգանունը)

**ASHOT MANUKYAN**

(first name, last name)



(ստորագրություն  
(signature))

« 13 » 12 2016թ.  
« 13 » 12 2016

4.S.  
S.P.

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝  
«ԷԼ ԸՆԴ ԷՄ ՌԵՅԼ» ՍՊԸ**

(կազմակերպության անվանումը)

**MINING OPERATOR**

**“A&M RARE” LLC**


(company name)

**ԱՄԻՆ ՋԱԶԱԵՐԻ**

(անուն, ազգանունը)

**AMIN JAZAERI**

(first name, last name)



(ստորագրություն  
(signature))

« 13 » 12 2016թ.  
« 13 » 12 2016

4.S.  
S.P.



Հավելված N 1  
օգտակար հանածոյի արդյունահանման  
«13» 12 2016թ. N P-548  
ընդերքօգտագործման պայմանագրի  
Annex N 1

to the Agreement on Mining No P-548 for Extraction of Minerals,  
dated “13” 12 2016

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

### 1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները

#### FINANCIAL PROPOSALS AND MINING FEES

##### 1. Financial proposal by the Mining Operator with the purpose of mineral extraction

C/h N	Ծախսերի անվանումը Name of the costs	Կատարման ժամկետը Performance term	Ներդրումների չափը /մլն.դրամ/ Size of investment /mln. AMD/
1.	Աշխատանքային ծախսեր - ջրագծի կառուցում -սանհտարական գոտու կառուցում - ճանապարհի կառուցում  Work expenses - pipeline construction - construction of sanitary zone - construction of road	2017թ-2018թ 2017թ-2018թ 2017թ-2018թ 2017-2018 2017-2018 2017-2018	1000.0 1,0 1000.0
2.	Կապիտալ ծախսեր -համալիրի (շալցման գործարանի, օժանդակ շինությունների) կառուցում, սարքավորումների ձեռք բերում և տեղադրում,բեռնատար մեքենաների և այլնի ձեռքբերում  Capital costs -complex construction (bottling plant, auxiliary buildings), acquisition and installation of equipment,trucks,etc.	2017թ-2019թ 2017-2019	4.800.0
3.	Գործառնական ծախսեր -հիդրոերկրաբանական մշտադիտարկումներ (մոնիթորինգ)  Operational costs - hydrogeological monitoring	շուրջտարյա year-round	0,50

##### 2. Պետական տուրքի և ընդերքօգտագործման վճարներ

2.1 ընդերքօգտագործման դիմաց կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են պարտադիր վճարներ (բնապահպանական, բնօգտագործման)՝ «Բնապահպանական և բնօգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

2.2 ընդերքօգտագործման թույլտվության դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում է տարեկան պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## 2. State duty and mining fees

2.1 For mining purposes a company shall make mandatory fee (nature protection, nature utilization) payments to the State Budget of the Republic of Armenia, in the manner and size prescribed by the RA Law “On Nature Protection and Nature Utilization”.

2.2 For mining permit mining operators shall make state duty payments to the State Budget of the Republic of Armenia, in the manner prescribed by the RA Law “On State Duty”.

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝  
THE RA MINISTER OF ENERGY INFRASTRUCTURES  
AND NATURAL RESOURCES:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(անուն,ազգանուն)

ASHOT MANUKYAN

(first name, last name)



« 13 » 12 2016թ.  
« 13 » 12 2016

Կ.Տ.  
Տ.Պ.


ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝  
«ԵՅ ԸՆԴ ԷՄ ՈԵՅՅՐ» ՍՊԸ  
(կազմակերպության անվանումը)  
MINING OPERATOR  
“A&M RARE” LLC  
(company name)

ԱՄԻՆ ՋԱԶԱԵՐԻ

(անուն,ազգանուն)

AMIN JAZAERI

(first name, last name)



(ստորագրություն)  
(signature)

« 13 » 12 2016թ.  
« 13 » 12 2016



Հավելված N 2  
օգտակար հանածոյի արդյունահանման  
«13» 12 2016թ. N Պ-548  
ընդերքօգտագործման պայմանագրի

Annex N 2  
to the Agreement on Mining No P-548 for Extraction of Minerals,  
dated “13” 12 2016

**Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ**  
**Obligations established by mine closure plan**

1. Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ՝

1.1 ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հանքի փակման ծրագրով նախատեսված՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումները (վերարակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ և հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղավորելու համար և այլն).

1.2 փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումները (համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր և միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն և այլն).

1.3 հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և այն ներկայացնել լիազոր մարմին:

1. Obligations by mine closure plan are as follows:

1.1 measures of social provision for the labor after the mine closure (organizing requalification trainings, organizing teaching of other specialties, to create incentives and opportunities for hiring such employees for other jobs, etc.) to be taken by the Mining Operator as intended by the mine closure plan;

1.2 intended social and economic provision measures for the communities located in the zone of immediate effect of the mine closure (participation in the social and economic programs, support to small and medium business, etc.);

1.3 2 years before the completion of the mine operation works to prepare the final mine closure plan and submit it to the Authorized Body.

C/h N	Միջոցառումների անվանումը Name of measures	Կատարման ժամկետը Performance term	Ներդրումների չափը /մլն.դրամ/ Size of investments /mln. AMD/
1.	Ջրաղբյուրի ջրառ կառուցի ապամոնտաժում Dismantling of pumping construction at the water source	1 ամիս 1 month	1,0

*Orin*

2.	Զրադբյուրի առաջին սանիտարական պահպանման գոտու ցանկապատի ապամոնտաժում Dismantling of fence at the first sanitary maintenance zone at the water source	1 ամիս 1 month	0,5
3.	Խախտված հողատարածքների ռեկուլտիվացիա Recultivation of disturbed lands	1 ամիս 1 month	0,2
	Ընդամենը Total		1,7

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ԴԱշԱՐՆԵՐԻ ԼԱԽԱՐԱՐ՝  
THE RA MINISTER OF ENERGY INFRASTRUCTURES  
AND NATURAL RESOURCES:

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝  
«ԵՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅ» ՍՊԸ  
(կազմակերպության անվանումը)  
MINING OPERATOR  
“A&M RARE” LLC  
(company name)

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(անուն,ազգանունը)

ASHOT MANUKYAN

(first name, last name)




(signature)

ԱՄԻՆ ՋԱԶԱԵՐԻ

(անուն,ազգանունը)

AMIN JAZAERI

(first name, last name)



(ստորագրություն)  
(signature)

«13» 12 2016թ.  
«13» 12 2016

«13» 12 2016թ.  
«13» 12 2016

Կ.Տ.

Տ.Պ.



Հավելված N 3  
օգտակար հանաձոյի արդյունահանման  
«13 » 12 2016թ. N Պ-548  
ընդերքօգտագործման պայմանագրի  
Annex N 3

to the Agreement on Mining No P-548 for Extraction of Minerals,  
dated " 13 " 12 2016

**Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ**  
**Obligations undertaken in the sphere of social and economic development of the community**

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափը և կատարման ժամկետները

Size and performance terms for obligations undertaken in the sphere of social and economic development of the community


Հ/հ N	Պարտավորությունների անվանումը Name of obligations	Կատարման ժամկետը Performance term	Ներդրումների չափը /մլն.դրամ/ Size of investments /mln. AMD/
1.	Դպրոցի կահավորում/կամ համանման այլ գործողություն School furnishing/ or similar	2017թ 2017	0,3
2.	Համայնքի ավտոճանապարհների վերանորոգում Renovation of the community roads/ or similar	տարեկան annual	0,2
3.	Սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն Aid to socially needy families/ or similar	տարեկան annual	0,5
4.	Սպորտիրապարակի կահավորում Furnishing of playground/ or similar	2017թ-2019թ 2017-2019	0,5

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝  
THE RA MINISTER OF ENERGY INFRASTRUCTURES  
AND NATURAL RESOURCES:

ԱՌՈՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
(անուն,ազգանունը)  
ASHOT MANUKYAN  
(first name, last name)  
  
(signature)

« 13 » 12 2016թ.  
« 13 » 12 2016

Կ.Տ.  
Տ.Պ.

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԱԳՈՐԾՈՂ՝  
«ԵՅ ՀՆԴ ԷՄ ՈԵՅՐ» ՍՊԸ  
(կազմակերպության անվանումը)  
MINING OPERATOR  
“A&M RARE” LLC  
(company name)  
ԱՄԻՆ ՋԱԶԱԵՐԻ  
(անուն,ազգանունը)  
AMIN JAZAERI  
(first name, last name)  
  
(signature)

« 13 » 12 2016թ.  
« 13 » 12 2016



Հավելված № 4  
օգտակար հանածոյի արդյունահանման  
«13» 12 2016թ. N Պ-548  
ընդերքօգտագործման պայմանագրի  
Annex N 4

to the Agreement on Mining No P-548 for Extraction of Minerals,  
dated “13” 12 2016

## Բնապահպանական կառավարման պլան Environmental management plan

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ:

1. Սանիտարական պահպանության առաջին (խիստ ուժիմի) գոտու կառուցապատում:

2. Ուժիմային դիտարկումների կատարում:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մոտ՝ 200 հազ.դրամ:

Բնապահպանական միջոցառումների մշտադիտարկումների ծրագիրը ենթակա է վերանայման 5 տարին մեկ պարբերությամբ:

Measures intended for reduction of environmental losses as a result of mining and prevention of irreversible impact.

1. Construction of first (strict regime) sanitary maintenance zone.

2. Performance of regular observations.

About AMD 200 thousand shall be annually intended for environmental measures.

Monitoring program for environmental measures shall be reviewed once in 5 years.

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝  
THE RA MINISTER OF ENERGY INFRASTRUCTURES  
AND NATURAL RESOURCES:

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝  
«ԵՅ ԸՆԴ ԷՄ ՌԵԶՐ» ՍՊԸ  
(կազմակերպության անվանումը)

MINING OPERATOR  
“A&M RARE” LLC  
(company name)

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(անուն, ազգանունը)

ASHOT MANUKYAN

(first name, last name)



(ստորագրությունը)  
(signature)


«13» 12 2016թ.  
«13» 12 2016

ԱՄԻՆ ՋԱԶԱԵՐԻ

(անուն, ազգանունը)

AMIN JAZAERI

(first name, last name)



(ստորագրությունը)  
(signature)

«13» 12 2016թ.  
«13» 12 2016



Կ.Տ.

Տ.Պ.

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**  
**ՕԳՏԱԿԱՐ ՀԱՍԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**  
**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ Պ-548**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

թ. Երևան

« 29 » 12

2023թ.

Հիմք ընդունելով «Հ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի պետքարգերի 29 թիվ 2854 -Ա հրամանը կատարել հետևյալ փոփոխությունները.

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-548 պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. «2. Պայմանագրի առարկան» բաժնի 2.1 կետի առաջին պարբերության՝ «0,77 լ/վրկ (24,2 հազ. մ<sup>3</sup>/տարի)» բառերը փոխարինել «0,77 լ/վրկ, այդ թվում՝ թիվ 5 աղբյուրից՝ 0,27 լ/վրկ (8,5 հազ.մ<sup>3</sup>), թիվ 6 հորատանցքից՝ 0,5 լ/վրկ (15,7 հազ.մ<sup>3</sup>)» բառերով.

բ. «ՀՀ Կոտայքի մարզի Արտավազ համայնքի վարչական տարածքի Ուլաշիկ գետի ավագանում գտնվող N5 ստորերկրյա հանքային ածխաթթվային ջրի աղբյուրի» բառերը փոխարինել «ՀՀ Կոտայքի մարզի Շաղկամարգի ածխաթթվային հանքային ջրի հանքվայրի թիվ 5 աղբյուրի և թիվ 6 հորատանցքի» բառերով.

գ. «1210 հազ.մ<sup>3</sup> ըստ «B» և «C<sub>1</sub>» կարգերի հանքային ջուր» բառերը փոխարինել «1210 հազ.մ<sup>3</sup> ըստ «A» և «B» կարգերի հանքային ջուր» բառերով.

դ. ավելացնել «Որոնք հատակագծի վրա և ըստ խորության սահմանափակվում են հետևյալ կոորդինատներով» տողը և լրացնել հետևյալ կերպ՝ «թիվ 5 աղբյուր՝ X=4501954.06 Y=8459555.71, թիվ 6 հորատանցք՝ X=4501946.92 Y=8459548.85».

ե. պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N1, N2, N3 և N4 հավելվածները փոխարինել նոր N1, N2, N3, N4 հավելվածներով և ավելացնել հավելված N5:

Սույն փոփոխությունը համարվում է՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-548 պայմանագրի անբաժանելի մասը:

**ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ**

**«ԵՅ ԸՆԴ ԵՄ ՌԵՁՐ» ՍՊԸ**

**ԳԼԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ**

**ԱՄԻՆ ԶԱԶԱԵՐԻ**

(անունը, ազգանունը)

(անունը, ազգանունը)



Signed by: SANOSYAN GNEL 1710830069

29. 12. 2023թ



29.12.2023թ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

### 1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները

NN ը/կ	Ծախսերի անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը (հազ.դրամ)
1.	Հանքի աշխատանքներ	-	-
2.	Կապիտալ	-	-
3.	Գործառնական	տարեկան	2500,0

### 2. Պետական տուրքի և ընդերքօգտագործման վճարներ

2.1 ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են պարտադիր վճարներ (բնապահպանական, բնօգտագործման կամ ռոյալթի)՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով և չափով։

2.2 ընդերքօգտագործման թույլտվության դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում է տարեկան պետական տուրք՝ համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով։

3. Շրջակա միջավայրի դրամագլուխ և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ։

3.1 ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի դրամագլխի վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով։

3.2 օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով։

3.3 բնապահպանական աշխատանքներ իիրականացման համար դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած հատկացումների չափը։

3.4 օգտակար հանածոների արդյունահանման նախագծով նախատեսված միջոցառումների կատարումից հետո ընդերքօգտագործողի կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին։

## Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ

1. Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ՝

1.1 ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հանքի փակման ծրագրով նախատեսված՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումները (վերաբերակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ և հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղափոխելու համար և այլն).

1.2 փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումները (համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր և միջին բիզնեսի կազմակերպման աջակցությունսայլն).

1.3 հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և այն ներկայացնել լիազոր մարմին:

Հ/հ	Միջոցառումների անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, հազ.դրամ
1.	Հորատանցքի կապտաժի ապամոնտաժում	0,5 ամիս	200,0
2.	Զրատար խողովակաշարի ապամոնտաժում	1,0 ամիս	1700,0
3.	Տարածքի մոնիթորինգ	5 տարի	500,0
4.	Արդյունաբերական (շալցում) ոլորտի 89 աշխատողների վերաբերակավորման դասընթացների կազմակերպում	1,0 ամիս	17800, 0
6.	Համայնքի սոցիալ-տնտեսական մեղմացման միջոցառումներ	1 տարի	400,0

Հավելված N 3  
Օգտակար հանածոյի արդյունահանման  
«\_29\_» 12 2023թ. N Պ-548  
Ընդերքօգտագործման պայմանագրի

**Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած  
պարտավորություններ**

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափը և կատարման ժամկետները

Հ/հ	Պարտավորությունների անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, հազ. դրամ
1.	Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին, այդ թվում՝ ավտոճանապարհների վերանորոգում և սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն, վճարելով համայնքի բյուջե	Յուրաքանչյուր տարի	700.0

## Բնապահպանական կառավարման պլան

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ՝

- մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկովտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,

- ջարշրկա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը և այլն:

Զրիավաք հորատանքի և աղյուրի շահագործման աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների <<օրենսդրության պահանջները:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն ջրհան կառուցների լավ տեխնիկական վիճակի, գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանդիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտու առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի ջրհան կառուցների շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիթորինգ) ջրհան կառուցների շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Զրիան կառուցների շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև նրանց պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել 200.0 հազ. դրամ:

Բնապահպանական կառավարման պլանը համառոտ նախատեսված է օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի անբաժանելի մաս հանդիսացող շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունն անցած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում», որը հանդիսանում է սույն հավելվածի մասը:

Հավելված N5

Օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման

«\_29\_» 12 2023 թ. N Պ- 548  
ընդերքօգտագործման պայմանագրի

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ (ԿԱՄ)  
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ  
ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԵՐԱՇԽԽՔՆԵՐ**

Ընդերքօգտագործման թափոններ կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների չափը

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, հազ.դրամ
1.	Չի նախատեսվում	-	-